Գործի տէրը նա է, Հերակլ Բ-ը, իր վրացական զօրքով. հայ ժողովուրդը միայն օգնականի դեր ունի, պասսիւ օգնականի եւ ուրիշ ոչինչ: Նա պէտք է իր դրամը հաւաքի եւ տայ Հերակլին ու ինքը հեռու քաշուի. սա էլ «կ'իմանայ, թէ ի՛նչ պէտք է անել, եւ Աստուած էլ նրա օգնականը կը լինի», ու հայոց ազգը կը փրկուի:

Ահա այսքան հեշտ բան է եղել Շահամիրեանի համար Հայաստանի անկախութեան իրականացումը:

բ) Ռամկավար հանրապետութիւն

Հայ ժողովրդի երջանկութեան տեսակէտից նրա ազատագրումը կամ անկախութիւնը օտար ազգերից դեռ եւս բաւական չի: Հարկաւոր է նաեւ, որ անկախ հայ ժողովուրդը ինքն իրեն կառավարի եւ կառավարի այնպէս, որ ոչ մի վտանգ չսպառնայ նրա երջանկութեանը: Հարկաւոր է, որ նա ունենայ մի կառավարութիւն, պետական մի վարչաձեւ, որը ապահովէր նրա յառաջադիմութիւնն ու զարգացումը եւ երջանկութեան ձգտելու բոլոր հնարաւորութիւններն ընձեռէր նրան:

Իբրեւ այդպիսին Շահամիրեանը նկատում է ռամկավար հանրապետութիւնը:

Մենք տեսանք արդէն, որ նա ժխտում է ընդհանրապէս միապետութիւնը եւ յատկապէս բացարձակ կամ միահեծան միապետութիւնը, որ նա «ինքնակալ» միապետութիւն է անուանում: Դրա հակառակ, իր համոզմունքներովը նա հանրապետական է, գտնելով, որ կառավարութեան այդ ձեւը, ուր ժողովուրդը եւ նրա կամքն են իշխողը, ընդունակ է թէ՛ անհատի եւ թէ՛ ժողովուրդների երջանկութիւնն ապահովելու:

Ուշադրաւ է, թէ նա ի՛նչպէս է հիմնաւորում նախ՝ միապետութեան խոտելիութեան եւ ապա՝ հանրապետութեան գերադասութեան սկզբունքները: Թէպէտ այն էլ պիտի ասել, որ նա իր բոլոր փաստերն եւ կարողութիւնը գործ է դնում միապետութեան, առանձնապէս ինքնակալ միապետութեան վնասներն ապացուցելու, դրանով նաեւ կողմնակիօրէն հիմնաւորելով միւս սկզբունքը՝ հանրապետութեան սկզբունքը:

Առաջին աղբիւրը, որտեղից քաղում է նա իր հիմունքները, քրիստոնէական կրօնն է կամ աւելի ճիշդ՝ Աստուածաշունչ գիրքը: Այդ պատճառով էլ նա ընկնում է սքօլաստիկայի մէջ եւ սքօլաստիկ պատճառաբանութեամբ ճգնում է ապացուցել, թէ ինչո՛ւ բացարձակ միապետութիւնը խոտելի է: Ադամի պատմութիւնից նա եզրակացնում է, թէ մարդը ստեղծուած չէ թագաւորելու համար, որովհետեւ թագաւորել մարդու վրայ նշանակում է իշխել մարդու բանական բնութեան կամ հոգու վրայ, որ Աստուծոյ շունչն է: Իսկ մահկանացու մարդը ի՞նչպէս կարող է իշխել Աստծու շնչի վրայ: Երբ Աստուած Ադամին կարգեց թագաւոր բանական բնութեան, այսինքն՝ թագաւոր ամբողջ տեսանելի աշխարհի եւ նրա մէջ եղած բոլոր կենդանիների, բոյսերի, հանքերի եւն., նրան չտուեց իրաւունք մարդու բանական բնութեան վրայ իշխելու: Եթէ այդպիսի իշխանութիւն նրան տրուած լինէր, նա կը կարողանար առաջինը ինքն իր վրայ իշխել, հետեւապէս կը զրկէր իրեն, Աստծու պատուէրը զանց չէր առնի եւ ուրեմն յաւիտենական երջանկութիւնից չէր զրկուի:

Ահաւասիկ մէկ ուրիշ սքօլաստիկ ապացոյց եւս.— մարդը արարած է, հետեւաբար միւս բոլոր արարածների նման նա՛ էլ ունի իր սկիզբը եւ վախճանը, նա՛ էլ անցաւոր է եւ ժամանակաւոր: Ուրիշ խօսքով, իբրեւ այդպիսին նա էլ սկզբից եւ եթ դրուած է որոշ սահմանների մէջ եւ օժտուած միմիայն որոշ սահմանափակ կարողութիւններով, որից այն կողմ անցնել չի կարող — չի կարող մի մազը թուխ կամ ճերմակ անել: Եթէ այդ այդպէս է, ուրեմն ի՞նչպէս կարող է նմանը նմանի եւ հաւասարը հաւասարի վրայ թագաւորել: Բայց չնայած դրան, մարդը ամբարշտանում է եւ ձգտում թագաւորել իր նմանի վրայ, հակառակ իր բնութեան, ենթարկուելով իր «զգայարանքներին եւ «սնոտի աշխարհի» ազդեցութիւններին: Եւ հետեւանքը լինում է այն, որ ինքն էլ է կործանւում, իր հպատակներն էլ: Կոյրը կոյրին եթէ առաջնորդի, երկուսն էլ կ'ընկնեն խորխորատի մէջ, երկուսն էլ միասին կը խորտակուեն:

Բայց նա իր առջեւ ունի նաեւ «իրական» եւ «պատմական» փաստեր՝ միապետութիւնը ժխտող: Նա գիտէ, որ մինչեւ անգամ անրան անասունները թագաւոր չունեն եւ «չեն ըն-